

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՊԵԿ-ԲՄԱՆՇՁԲ-21/4**

«25» հոկտեմբեր 2021թ.

ք.Երևան

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արտոդիանչին» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ.Խաչատրյանի (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ք.Երևան, Ղեղատան 3 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 270 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱՍԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուին իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուին պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմունտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ու սահմանված ռեսուրսները:

3.4.13 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

## **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՉՆԱՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման հրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

### 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **76 000 000 (Յոթանասունվեց միլիոն) ՀՀ դրամ**՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ **15 200 000 (Տասնհինգ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ**ը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 8.13 կետով կնքվելիք համաձայնագրով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

### 6. ԿՐՈՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂՅԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՋՐԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:**

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուին ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք չկան հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առավելագույն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառուի կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 23 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 2.1, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե  
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900011030534  
ՀՎՀՀ 02647057  
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

**Է.Գևորգյան**



**ԿԱՊԱԼԱՐՈՒ**

«Արտդիանշին» ՍՊԸ  
ք. Արարատ, Գրիբայեդովի 24  
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1150000527187135  
ՀՎՀՀ 04112378  
«Արտդիանշին» ՍՊԸ-ի տնօրեն՝

**Մ. Խաչատրյան**



**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱՆԱՀԱՇԻԿ\***

**Ք.Երևան, Դեղատան 3 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքների  
 CPV-45611300/505**

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը (ՀՀ դրամ)
				(ՀՀ դրամ)	
1	2	3	4	5	6
<b>1-1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ</b>					
<b>Քանդման աշխատանքներ՝ I հարկ</b>					<b>399,311.50</b>
1	Ապամոնտաժել մուտքի հարթակի և գետնախարիսխի ջարդված, ճաքած բազալտե սալիկները	մ <sup>2</sup>	25	380.00	9,500.00
2	Մաքրել առաստաղի, հեծանների և մուտքի ծածկի ներկանյութը	մ <sup>2</sup>	365.5	190.00	69,445.00
3	Մաքրել պատերի և սյուների ներկանյութը և պաստառնեհո	մ <sup>2</sup>	697.5	190.00	132,525.00
4	Մաքրել շեպերի ներկանյութը	մ <sup>2</sup>	99	190.00	18,810.00
5	Այլումինե դռան ապամոնտաժում շեպերի քանդումով	մ <sup>2</sup>	1.68	760.00	1,276.80
6	Մուտքի դռների ապամոնտաժում շեպերի քանդումով	մ <sup>2</sup>	14.36	760.00	10,913.60
7	Պատուհանի ապամոնտաժում շեպերի և պատուհանագոգերի քանդումով	մ <sup>2</sup>	3.4	760.00	2,584.00
8	Կտրել սրահի դարակաշարը	մ	1.23	760.00	934.80
9	Փոքր աշխատասրահի դարակաշարը ապամոնտաժել	մ	1.8	760.00	1,368.00
10	Խարամաքետոնե սալիկներից միջնորմային պատերի քանդում δ=100մմ	մ <sup>2</sup>	6.3	500.00	3,150.00
11	Ապամոնտաժել ապակյա միջնորմը δ=6մմ	մ <sup>2</sup>	5.6	700.00	3,920.00
12	Պատերի մաքրում ցեմ.ավազային սվաղից	մ <sup>2</sup>	42.5	380.00	16,150.00
13	Հախճասալի քանդում	մ <sup>2</sup>	42.5	315.00	13,387.50
14	Խեցեխալիկների ապամոնտաժում	մ <sup>2</sup>	6	315.00	1,890.00
15	Գրանիտե հատակի ապամոնտաժում	մ <sup>2</sup>	1.5	760.00	1,140.00
16	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի քանդում δ=20մմ	մ <sup>2</sup>	7.5	380.00	2,850.00
17	Բետոնե շերտի քանդում 6սմ հաստության	մ <sup>3</sup>	0.5	10,100.00	5,050.00
18	Պլաստիկե կախովի առաստաղի քանդում	մ <sup>2</sup>	6	315.00	1,890.00
19	Ապամոնտաժել ֆասադային վիտրաժների բացվող փեղկը	մ <sup>2</sup>	78.3	500.00	39,150.00
20	Ապամոնտաժել աստիճանավանդակների ֆասադային վիտրաժների բացվող փեղկը	մ <sup>2</sup>	4.2	500.00	2,100.00
21	Շին.աղբի բարձում	մ <sup>3</sup>	15.6	760.00	11,856.00
22	Տեղափոխում թափոնատել 12կմ հեռ.վրա	տ	28.08	1,760.00	49,420.80
<b>Քանդման աշխատանքներ՝ II հարկ</b>					<b>632,518.70</b>
1	Մաքրել բոլոր սենյակների մանրահատակները սկավառակային հղկաթղթով՝ բացի 2-8,2-9,2-10,2-26 սենյակները	մ <sup>2</sup>	233.4	500.00	116,700.00

2	Մաքրել առաստաղի, հեծանների ծածկի ներկանյութը	մ <sup>2</sup>	607.8	190.00	115,482.00
3	Մաքրել պատերի և սյուների ներկանյութը և պաստառները	մ <sup>2</sup>	1119.4	190.00	212,686.00
4	Մաքրել շեպերի ներկանյութը	մ <sup>2</sup>	141.3	190.00	26,847.00
5	Մաքրել հղկաթղթով փայտատաշեղային սալերով դռների մակերեսները երկու կողմից	մ <sup>2</sup>	65	190.00	12,350.00
6	Փայտատաշեղային սալերով դռների ապամոնտաժում շեպերի քանդումով 0,9x2,1-2հատ	մ <sup>2</sup>	3.78	500.00	1,890.00
7	Գիպասատվարաթղթե միջնորմի քանդում $\delta=100$ մմ	մ <sup>2</sup>	17.5	440.00	7,700.00
8	Քանդել բացվածք $\delta=10$ սմ միջնորմի մեջ	մ <sup>2</sup>	1.9	570.00	1,083.00
9	Պատերի մաքրում ցեմ.ավազային սվաղից	մ <sup>2</sup>	53.5	380.00	20,330.00
10	Հախճասալի քանդում	մ <sup>2</sup>	53.5	315.00	16,852.50
11	Խեցեսալիկների ապամոնտաժում	մ <sup>2</sup>	13.82	315.00	4,353.30
12	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի քանդում $\delta=20$ մմ	մ <sup>2</sup>	13.82	380.00	5,251.60
13	Բետոնե շերտի քանդում 6սմ հաստության	մ <sup>3</sup>	0.8	10,100.00	8,080.00
14	Պլաստիկե կախովի առաստաղի քանդում	մ <sup>2</sup>	13.82	315.00	4,353.30
15	Շին.աղբի բարձում	մ <sup>3</sup>	20	760.00	15,200.00
16	Տեղափոխում թափոնատեղ 12կմ հեռ.վրա	տ	36	1,760.00	63,360.00
	<b>Քանդման աշխատանքներ՝ III հարկ</b>				<b>544,144.20</b>
1	Մաքրել բոլոր սենյակների մանրահատակները սկավառակային հղկաթղթով՝ բացի 3-4,3-5,3-9,3-10 սենյակները	մ <sup>2</sup>	209.8	500.00	104,900.00
2	Մաքրել առաստաղի, հեծանների ծածկի ներկանյութը	մ <sup>2</sup>	513.95	190.00	97,650.50
3	Մաքրել պատերի և սյուների ներկանյութը և պաստառները	մ <sup>2</sup>	873	190.00	165,870.00
4	Մաքրել շեպերի ներկանյութը	մ <sup>2</sup>	141.3	190.00	26,847.00
5	Մաքրել հղկաթղթով փայտատաշեղային սալերով դռների մակերեսները երկու կողմից	մ <sup>2</sup>	58.4	190.00	11,096.00
6	Պատերի մաքրում ցեմ.ավազային սվաղից	մ <sup>2</sup>	53.5	380.00	20,330.00
7	Հախճասալի քանդում	մ <sup>2</sup>	53.5	315.00	16,852.50
8	Խեցեսալիկների ապամոնտաժում	մ <sup>2</sup>	13.82	315.00	4,353.30
9	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի քանդում $\delta=20$ մմ	մ <sup>2</sup>	13.82	380.00	5,251.60
10	Բետոնե շերտի քանդում 6սմ հաստության	մ <sup>3</sup>	0.8	10,100.00	8,080.00
11	Պլաստիկե կախովի առաստաղի քանդում	մ <sup>2</sup>	13.82	315.00	4,353.30
12	Շին.աղբի բարձում	մ <sup>3</sup>	20	760.00	15,200.00
13	Տեղափոխում թափոնատեղ 12կմ հեռ.վրա	տ	36	1,760.00	63,360.00
	<b>Քանդման աշխատանքներ՝ IV հարկ</b>				<b>572,818.70</b>
1	Մաքրել բոլոր սենյակների մանրահատակները սկավառակային հղկաթղթով՝ բացի 4-10,4-11,4-18,4-19 սենյակները	մ <sup>2</sup>	221.4	500.00	110,700.00
2	Մաքրել առաստաղի, հեծանների ծածկի ներկանյութը բացի 4-10,4-11,4-18,4-19 սենյակները	մ <sup>2</sup>	535.7	190.00	101,783.00
3	Մաքրել պատերի և սյուների ներկանյութը և պաստառները	մ <sup>2</sup>	804.6	190.00	152,874.00
4	Մաքրել շեպերի ներկանյութը	մ <sup>2</sup>	200.3	190.00	38,057.00
5	Մաքրել հղկաթղթով փայտատաշեղային սալերով դռների մակերեսները երկու կողմից	մ <sup>2</sup>	58.4	190.00	11,096.00

6	Փայտատաշեղային սալերով դռների ապամոնտաժում շեպերի քանդումով 0,9x2,1-3հատ	մ <sup>2</sup>	5.67	500.00	2,835.00
7	Պատերի մաքրում ցեմ.ավազային սվաղից	մ <sup>2</sup>	74.9	380.00	28,462.00
8	Հախճասալի քանդում	մ <sup>2</sup>	74.9	315.00	23,593.50
9	Խեցեսալիկների ապամոնտաժում	մ <sup>2</sup>	13.82	315.00	4,353.30
10	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի քանդում δ=20մմ	մ <sup>2</sup>	13.82	380.00	5,251.60
11	Բետոնե շերտի քանդում 6սմ հաստության	մ <sup>3</sup>	0.8	10,100.00	8,080.00
12	Պլաստիկե կախովի առաստաղի քանդում	մ <sup>2</sup>	13.82	315.00	4,353.30
13	Շին.աղբի բարձում	մ <sup>3</sup>	20.7	760.00	15,732.00
14	Տեղափոխում թափոնատեղ 12կմ հեռ.վրա	տ	37.3	1,760.00	65,648.00
<b>Քանդման աշխատանքներ՝ V հարկ</b>					<b>639,045.50</b>
1	Մաքրել բոլոր սենյակների մանրահատակները սկավառակային հղկաթղթով՝ բացի 5-8,5-9,5-10 սենյակները	մ <sup>2</sup>	248.5	500.00	124,250.00
2	Մաքրել առաստաղի, հեծանների ծածկի ներկանյութը բացի 5-8,5-9,5-10 սենյակները	մ <sup>2</sup>	574.3	190.00	109,117.00
3	Մաքրել պատերի և սյուների ներկանյութը և պաստառները	մ <sup>2</sup>	1036.7	190.00	196,973.00
4	Մաքրել շեպերի ներկանյութը	մ <sup>2</sup>	202.8	190.00	38,532.00
5	Մաքրել հղկաթղթով փայտատաշեղային սալերով դռների մակերեսները երկու կողմից	մ <sup>2</sup>	65	190.00	12,350.00
6	Պատերի մաքրում ցեմ.ավազային սվաղից	մ <sup>2</sup>	54.9	380.00	20,862.00
7	Հախճասալի քանդում	մ <sup>2</sup>	54.9	315.00	17,293.50
8	Խեցեսալիկների ապամոնտաժում	մ <sup>2</sup>	14.2	315.00	4,473.00
9	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի քանդում δ=20մմ	մ <sup>2</sup>	14.2	380.00	5,396.00
10	Բետոնե շերտի քանդում 6սմ հաստության	մ <sup>3</sup>	0.9	10,100.00	9,090.00
11	Պլաստիկե կախովի առաստաղի քանդում	մ <sup>2</sup>	14.2	315.00	4,473.00
12	Շին.աղբի բարձում	մ <sup>3</sup>	24.5	760.00	18,620.00
13	Տեղափոխում թափոնատեղ 12կմ հեռ.վրա	տ	44.1	1,760.00	77,616.00
<b>Քանդման աշխատանքներ՝ VI հարկ</b>					<b>1,057,383.50</b>
1	Մաքրել բոլոր սենյակների մանրահատակները սկավառակային հղկաթղթով՝ բացի 6-3 սենյակը	մ <sup>2</sup>	241.1	380.00	91,618.00
2	Մաքրել առաստաղի, հեծանների ծածկի ներկանյութը բացի 6-3,6-11, 6-12,6-13 սենյակները	մ <sup>2</sup>	554.3	190.00	105,317.00
3	Մաքրել պատերի և սյուների ներկանյութը և պաստառները բացի 6-3,6-11, 6-12,6-13 սենյակները	մ <sup>2</sup>	1480	190.00	281,200.00
4	Ներքին փայտամածի կառուցում և քանդում	մ <sup>2</sup>	568	570.00	323,760.00
5	Մաքրել շեպերի ներկանյութը	մ <sup>2</sup>	228	190.00	43,320.00
6	Մաքրել հղկաթղթով փայտատաշեղային սալերով դռների մակերեսները երկու կողմից	մ <sup>2</sup>	74	190.00	14,060.00
7	Պատերի մաքրում ցեմ.ավազային սվաղից	մ <sup>2</sup>	60.3	380.00	22,914.00
8	Հախճասալի քանդում	մ <sup>2</sup>	60.3	315.00	18,994.50
9	Խեցեսալիկների ապամոնտաժում	մ <sup>2</sup>	14	315.00	4,410.00
10	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի քանդում δ=20մմ	մ <sup>2</sup>	14	380.00	5,320.00
11	Բետոնե շերտի քանդում 6սմ հաստության	մ <sup>3</sup>	0.8	10,100.00	8,080.00
12	Պլաստիկե կախովի առաստաղի քանդում	մ <sup>2</sup>	14	315.00	4,410.00
13	Շին.աղբի բարձում	մ <sup>3</sup>	34.1	760.00	25,916.00
14	Տեղափոխում թափոնատեղ 12կմ հեռ.վրա	տ	61.4	1,760.00	108,064.00

<b>Քանդման աշխատանքներ՝ տանիք</b>					<b>557,192.00</b>
1	Ապամոնտաժել չաշխատող կոնդիցիոներների արտաքին օդափոխության բլոկները և մալուխները	կ-տ	9	22,000.00	198,000.00
2	Ապամոնտաժել օդորակիչների արտաքին բլոկները	կ-տ	16	20,000.00	320,000.00
3	Բացել տանիքի պարապետի թիթեղյա հատվածը	մ	66	380.00	25,080.00
4	Տանիքի աղբի հավաքում և տեղափոխում շենքից դուրս	տ	5.6	760.00	4,256.00
5	Շին. աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռավրա	տ	5.6	1,760.00	9,856.00
<b>Վիտրաժներ</b>					<b>1,039,686.00</b>
1	Ալյումինե միաշերտ ապակեփաթեթով վիտրաժ, փայլատ 4x12x4մմ, լայնքը 60մմ, արծաթագույն, բացվող մաս	մ <sup>2</sup>	4.25	52,200.00	221,850.00
2	Նույնը՝ չբացվող մաս	մ <sup>2</sup>	19.38	42,200.00	817,836.00
<b>Ղռներ</b>					<b>1,342,700.50</b>
1	Ալյումինե ֆասադային, երկշերտ ապակեփաթեթով, ջերմակամրջակով, 4x12x4մմ, լայնքը 60մմ, արծաթագույն, բացվող մաս	մ <sup>2</sup>	10.89	56,600.00	616,374.00
2	Նույնը՝ չբացվող մաս	մ <sup>2</sup>	3.47	52,850.00	183,389.50
3	Ապամոնտաժված փայտե տաշեղային սալերով, սպիտակ ներկված դռան վերատեղադրում 900x2100(հ)	հատ	1	7,400.00	7,400.00
4	Մետաղապլաստ, լիցքով, սպիտակ, 60մմ հաստությամբ, 4 խցիկով	մ <sup>2</sup>	15.99	28,300.00	452,517.00
5	Մետաղական դռան տեղադրում Դ-5	տ	0.108	650,000.00	70,200.00
6	Ծխնի	հատ	3	1,440.00	4,320.00
7	Մետաղական դռների ներկում 2 անգամ	մ <sup>2</sup>	2.8	1,000.00	2,800.00
8	Փականի արժեքը բռնակով	լրակ	1	5,700.00	5,700.00
<b>Պատուհաններ</b>					<b>4,433,800.00</b>
1	Ալյումինե երկշերտ ապակեփաթեթով 4x12x4մմ, լայնքը 60մմ, ջերմակամրջակով, մոխրագույն, բացվող մաս	մ <sup>2</sup>	28.1	50,000.00	1,405,000.00
2	Նույնը՝ չբացվող մաս	մ <sup>2</sup>	57.8	40,000.00	2,312,000.00
3	Բարդ փական	հատ	64	11,200.00	716,800.00
<b>Վերակառուցման աշխատանքներ I հարկ</b>					<b>2,735,966.00</b>
1	Մուտքի հարթակների և գետնախարիսխի երեսապատում բազալտե սալիկներով d=30մմ	մ <sup>2</sup>	25	15,100.00	377,500.00
2	Առաստաղների, հեծանների և մուտքի ծածկի քսահարթում գաջի շաղախով	մ <sup>2</sup>	36.5	1,440.00	52,560.00
3	Առաստաղի սվաղի ծեփամածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	մ <sup>2</sup>	365.5	1,500.00	548,250.00
4	Պատերի և սյուների սվաղում գաջի լավորակ շաղախով	մ <sup>2</sup>	70	1,440.00	100,800.00
5	Պատերի և սյուների սվաղի ծեփամածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	մ <sup>2</sup>	697.5	1,500.00	1,046,250.00
7	Շեփերի սվաղի ծեփամածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	մ <sup>2</sup>	99	1,500.00	148,500.00
8	Ցեմ/ավազային լավորակ սվաղ հախճասալիկների տակ՝ սանհանգույցներում և ճաշասրահում	մ <sup>2</sup>	46.35	1,440.00	66,744.00
9	Պատերի երեսապատում հախճասալիկներով, սունձի վրա	մ <sup>2</sup>	46.35	6,100.00	282,735.00
10	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության, M150 մակնիշի շաղախով	մ <sup>2</sup>	6	1,300.00	7,800.00

11	Հատակների իրականացում չսահող խեցեսալիկներով	մ <sup>2</sup>	6	6,600.00	39,600.00
12	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության, M150 մակնիշի շաղախով	մ <sup>2</sup>	1.5	1,300.00	1,950.00
13	Միջանցքի հատակի հատվածը երեսապատել առկա գրանիտին համապատասխան գրանիտով ամրացված սոսնձով	մ <sup>2</sup>	1.5	19,500.00	29,250.00
